

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

of Punjab and Sindh

Punjab and Sindh



20 - 10

396  
и-28

Գ. ԽՈՂԻԿՈՎԱ, ՅՈՒ.

ԽՈՂԻԿՈՎԵԱ ԴԵՊԻ ԳԱԶԳՈՎԱՀ

Գ. Խ. Տ. Պ. Ա. Տ.

1932

Տ. Խ. Պ. Ա. Տ.

55 952

396

u-98

45

8 MAY 2013

Վ. ԽԵԶԻԿՈՂԼՅԱ

Suzanna

100  
31541

## ԽՈՅԱՆՈՑԻՑ ԴԵՊԻ ԴԱԶԳՎԱՇ

## (ՆՎԻՐՎՈՒՄ Ե ԿԱՆԱՆՑ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՏՈՆԻՆ)



ԿԱՆԱՆՑ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՈՒԾ

Չետիքատի տողաբռն  
Գլավիիտ 7:49 (ր)  
Պատվեր 687  
Հրատ. 2108  
Տիրած 4000

Կահանաց միջազգային կոմունիստական 22-րդ տարե-  
դարձը տոնում ենք այնպիսի պայմաններում, յերբ վողջ կա-  
պիուալիստական աշխարհը տառապոմ և անբուժվի տնտե-  
սական ճգնաժամով, յերբ այնտեղ հարստացողների և հա-  
րստահարվողների միջև հակություններն ու հակամար-  
տությունները զնալով չտեսնլած չափով խորանում են:  
Գործազուրկ բանվոր-բանվորուհների բանակներն անընդ-  
հատ աճում են. 40 միլ. ավելի գործազուրկներ, հարյուրա-  
վոր միլիոնների հասնող ընտանիքի անդամներ քաղցի ու սո-  
վի են մատնված: Մյուս կողմից, բանվորական մասսաներն  
որ որի վրա հեղափոխականնում, անցնում են կոմկուսակ-  
ցությունների չարքերն ու համախմբվում նրանց չուրջը:  
Կապիտալիզմը տնտեսական ճգնաժամից դուրս գալու միակ  
յելքը համարում է իմպերիալիստական նոր պատերազմը,  
վոր ուղղված է սոցիալիզմ կառուցող յերկրի հԱՄ դեմ:

Կանանց միջազգային հեղափոխական տոնը սոցիալիզմ  
կառուցվող յերկրում տոնվում է այնպիսի մի պատմական ժա-  
մանակաշրջանում, յերբ վաղուց ի վեր իսպառ վերացել ե  
գործազրկությունը, ուր չտեսնված թափով զարդանում է  
սոցիալիստական տնտեսությունը, ուր արդեն սոցիալիստա-  
կան եկոնոմիկայի ֆունդամենտը կառուցվել է և մտել սո-  
ցիալիզմի կառուցման հարածուն շրջանը: Հաղթանակող  
պրոլետարիատն արդյունաբերության ինդուստրացման,  
զյուղի սոցիալիստական վերակառուցման 5-ամյա պլանն ա-  
վարտելով ընթացիկ 4-րդ տարում, գյուղի համատարած կո-  
լեկտիվացման հիմուն վրա, կուլակ դասակարգի իսպառ վե-  
րացման հետ միասին, գոտեանդվում և անդասակարգ հա-

սարակություն ստեղծելու՝ 2-րդ հնգամյա պլանի իրազորձմաժք:

22 տարի շարունակ բուրժուազիայի լծի տակ ստրկացած աշխատավորուհին ճնշված ու արյունաքամ դրությամբ, կոռմունիստական կուսակցության և հեղափոխական պլուետարիատի ղեկավարությամբ ու ոգնությամբ ամեն տարի կազմակերպված շարքերով գուրս և յեկել պայքարի հանուն իրենց տնտեսական, իրավական դրության բարիքման ու ազատագրման, հանուն հեղափոխական գիտակցության ու համերաշխատթյան, վերջապես՝ հանուն վերջնական ազատագրման-սոցիալիզմի հաղթանակի համար: Յեզ այդ տասնյակ տարիների պայքարն ապարդյուն չի անցել: Այդ պայքարում պատմության մեջ աշխարհում առաջին անգամ հաղթանակը տարավ խորհուրդների յերկրի աշխատավորութիւն: Այժմ կապիտալի լծի տակ հեծող կին աշխատավորությունն իր հեղափոխական շարքերն ամրացնելով՝ համախմբվում է Կոմիտաներնի սեկցիաների ու հեղափոխական պրոլետարիատի շուրջ և վերջնական ու գնահատն ժարտի յե պատրաստվում, անխուսափելի ժարտի:

### ԿԻՆԸ ԿԱՊԻՏԱՆԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒԹՅ

Կապիտալիստական յերկրներում կինը գեռ ճորտի ու սորուելի դերում է: Այնաև նա վայրագ կերպով ճնշվում է իրեն ընտանիքի ու հասարակության անհավասար անդամ: Կարիքի զոհ զարձած, կիսաքաղց դրությամբ նա շահագործվում և արդյունաբերության մեջ, հավելյալ արժեք և արտադրում կապիտալիստի համար և ոգտագործվում իրեն քանվորի աշխատավարձի իջեցման մի միջոց, մասնավորդ ներկա մոմենտում, յերբ կապութիստական աշխարհում տնտեսական ճշնաժմում խորանում և դրա հետևանքով կինը, կարիքից ստիլված, ընկնում է պրոստիտուցիայի՝ սոցիալական այդ չարիքի գիրկը: Այս մի քանի որինակներ կապիտալիստական յերկրներից:

### ԿԻՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԻՆԱՍՏԱՑՈՒԹՅ

Շանհայի ղանազան արդյունաբերություններում աշխատող կանանց թիվը հասնում է 125 հզարից ավելի. այնտեղ աշխատում են նաև 5-6 տարեկան հասակ ունեցող յերեխաները: Կնոջ աշխատանքի պահպանություն ասած բանը գոյություն չունի այդ յերկրում: Բանվորուին եղիսարյան մինչև վերջին որն ել աշխատում է, իսկ ազատվելու յերկրորդ որը պարտավոր և աշխատանքի գնալ: Յերեխան մեջին կապած, մեմնայի տակ նստած՝ 12-15 ժամ աշխատում և տնբարյար: Չին բանվորուին ամբողջ տարվա մեջ միայն 8 հանգստի որ ունի: Աշխատանքի այս վաստ պայմանների վրա ավելանում ե նաև բնակարանային կարիքը. Բանվորուի բնակարանը գործարանն է. կեղտի, մրի մեջ նա կերտվում է, մաքրվում, բնում է, իսկ ամենազլյալորն այն է, վոր գործարանից դուրս գնալու համար նա պիտի իրավունք ինչդրի գործարանատիրոջից:

Կապիտալիստները, հատկապես Անգլիայի թալանչիներն, ոգտավելով Զինաստանի ժողովրդի և գլխավորապես կանանց հետամնացությունից, շահագործում են նրանց ամենազլյալ կերպով:

### ՅԱՊՈՆԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀՈՒ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Այնտեղ անչափահաս բանվորուհին աշխատում է 11-12 ժամ անդադար: Կնոջ և անչափահաս յերեխաների գիշերային աշխատանքը սովորական յերեվույցը և Յապոնիայում: Այս բոլորի համեմետ չնչին ոռծիկ են ստանում, ամենալավ դեպքում շատ ստացողն որական 1 ոռութի յե աշխատում: Տեքստիլ գործարանի՝ 20 տարվա փորձառություն ունեցող բանվորուհին որական 50 կոպեկ ե ստանում: Բանվորուի բնակարանը գործարանն է: Զնայած այսպես, արդյունաբերության մեջ կինը մեծ տեղ է զբաղում և տնտեսապես անկախ է, բայց նա նույնպես իրավագործկ է քաղաքական և ընտանեկան կյանքում:

## ԿԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՑԻՄ

Այստեղ ես աշխատանքի պահպանություն առած բանը կոյսություն չունի. Գերմանիայում քանվորուին իր եղիսաբեր շրջանում միայն ամիս ու կես է արձակուրդ տառանում, և այդ արձակուրդի որերին ել ոռնիկի կեսն են միայն տակիս. դրա համար ել ստիպված ե ժամանակից շուրջ գործի անցնել, վեր չըրկիվ կոպեկներից: Կան արդյունաբերություններ, վորտեղ չնայած բանվորուհին պիտի աշխատի 8-9 ժ., նրան ստիպում են աշխատել 10-11 ժամ, այն ել չնչին աշխատավրձով:

Նման դրությունն զոյտությունն ունի Անգլիայում և մյուս կապիտալիստական պետություններում: Կապիտալիստաները կոմանց ընդդրկումն արդյունաբերության մեջ վոչ միայն համարում են Ամենալավ շահագործման միջոց, վորքան կարող են շատ են շահ կորզում, այլ նաև տղամարդ աշխատուի աշխատավարձի գրեթե կեսից ել պակաս աշխատավարձ են տալիս նրանց այսպիսով աղնիվ ուժեղ պայքար առանում պրոլետարիատի դեմ՝ գիտակից բանվորներից աղնիվ մեծ խմբեր փողոց շպրտելով: Կապիտալիստական յերկրներում այժմ կան շատ ընտանիքներ, վորոնի ունեն 3-4 աշխատավոր ձեռն, բայց նրանցից միայն մեկ կին աշխատավորուիք յետ աշխատում, վոր իր ստացած չնչին աշխատավարձով կերակրում և ընտանիքի աշխատումակ սովամարդ անքամներին:

## ԿԻՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ

Մեզ մոտ պայմաններն այլ են: Հոկտեմբերյան հեղափոխությունից սկսած, Խորհրդային Միության մեջ, առաջին անգամ պատմության մեջ՝ կինն աղատադրվեց և հավասար իրավունքների տեր դարձավ: Նա աղատադրվեց թե տնտեսական կապանքներից ու ստրկությունից և թե չահաղործումից ու պրոստիտուցիայից:

«Բայց կեզմիկյան, խորհրդային հեղափոխությունը կա-

նանց ճնշման ու անհավասարության արմատներն այնպես խոր և կտրառում, ինչպես չի հանդինի կտրուել և վոչ մի կուտակություն, և վոչ մի հեղափոխություն աշխարհում: Մեղնում, Խորհրդային Ռուսաստանում, ըստ մեր որենքի՝ կոնջ ու տղամարդու անհավասարությունից հետք անդամ չի մնացել: Առանձնապես զգվելի, ստոր, կեղծավոր անհավասարությունն ամուսնական ընտանելիան իրավունքի մեջ, անհավասարությունը յերեխայի վերաբերմամբ՝ Խորհրդային եւխանությունը լիովին վոչնչացրել ե» (Լենին):

Առաջին անգամ կինը պրոլետարիատի դիկտատորակի պայմաններում վայելեց իսկական աշխատանքի որենսդրությունը:

Մեզ մոտ կինն աշխատում ե 8 ժամ, իսկ շատ տեղերում՝ արդեն 7 ժամ: Առաջին 5-ամյակի վերջում արդեն քանիսականին ամեն տեղ կաշխատի 7 ժամ: Հզուրյան ժամանակ մեզ մոտ բանվորուին ստանում ե 4 ամիս տեղադրույամբ Փիզիոլոգիական արձակուրդ: Յերեխա կերակրելու առաջին ամիսները նա բոլորովին ազատվում է զիշերային հերքափախում աշխատելուց, իսկ ցերեկն աշխատելիս ամեն 2 ժամը մեկ անգամ ազատվում է աշխատանքից  $\frac{1}{4}$  ժամով՝ յերեխային կերակրելու համար: Նա ստանում է նաև լրացրույթ արձակուրդ վեասակար արդյունաբերության մեջ աշխատելու դեպքում. վերջապես աշխատավորուին իր ծերության ժամանակ պետության կողմից ապահովություն է ստանում և այլն:

Մեզ մոտ կինը վարձու աշխատանքի գնում և վոչ թե աղքատությունից և քաղցից ստիպված, այլ նա մտնում է աշխատանքի՝ կուլտուր-կենցաղային ավելի լավ պայմաններ ձեռք բերելու համար և վոր գլխավորն ու ամենակարեւորն ե՝ նա գրանով մասնակցում է Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության մեջ գործին: Մեր իրականության մեջ, սոցիալիստական շինարարության վոչ մի քաղաքավառ չիա, ուր կինը չմասնակցի և չղեկավարի. այդ մրա-

համար ե նաև, վարպեսզի նա առաջ մդի ամրող աշխարհի պայլետարիատի պայքարը:

Խորհրդային յերկրում կնոջ համար առավելագույն հնարավորություններ են ստեղծված՝ նրան քաղաքականության մեջ քաշելու: Կինը լայն հնարավորություններ ե ստացնէ իր կուլտ-կրթական մակարդակը բարձրացնելու, վերջապես նա իր կուլտ-կենցաղային ուժայմանները լավացնելու համար բոլոր հնարավորություններն ունի:

Ահա մի քանի թվերով վորոնք հաստատում են այդ մտքերի ճշգույնությունը և. Հայաստանի նկատմամբ:

ՄՈՐ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ  
ՅԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ՈՒ ՄԱՆԿ. ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԻՊԸ	1930			1931			1932		
	Հիմնարկների ներք. թվում	Մահմանական ներք. թվում	Հիմնարկների ներք. թվում						
1. Մշտական մսուբներ . . .	8	365	18	810	32	965			
2. Սեղոնային մսուբներ գյուղերում . . . . .	43	1290	233	6990	500	16875			
3. Կանոնութացիաներ . . .	16	--	23	/	26	/			
1. Մանկապարտեզներ և մանկական ոջախներ (բնողը վող յերեխաների թէվը) . . . . .	—	11900	—	14300	—	16300			
2. Մանկական հրապարակ- ներ և պրիմիտիվներ . . .	—	32400	/	40100	—	54200			

Բացի այդ, կնոջը տնային «ստրկացնող» աշխատանքից վերջականապես աղատադրելու և սոցիալիստական շինուարության հետ ընդհուպ կապելու նպատակով մենք փախենք

մեջ պետական սոցապ. բյուջեյի ոգտագործման յեղանակը, շարձնելով նրա յերեսը դեպի արդյունաբերություն և դեպի բանվոր-բանվորության կուլտ-կենցաղային կարիքների ասպահովումը և նրան արդյունաբերության հետ կապելու ռազմականությամբ:

Այս մտքերը հաստատելու համար բերում ենք. Խորհրդային Միության գծով 1931 թ. այդ ուղղությամբ բաց թողարկած գումարները:

Բանբնակչինարարության . . . . .	331,6	միլ.	ոուր.
Մասուրների կազմակերպման . . . . .	20,0	»	»
Սանկ. հրապարակ. և մանկապարտեզներին 20,0	»	»	»
Դիետ. սննդի կազմակերպման . . . . .	10	»	»
Բաղնիք. և լվացքատների կազմակերպման 10	»	»	»

Խորհրդային Միության հետ միասին ալգախիք գրաւ-թյուն գույթուն ունի և Խորհրդային Հայաստանում. Ահա այդ թվերը:

Բաց և թողնվել 1931 թ. և բաց և թողնվել 1932 թ.	
1. Բնակչինարարութ. . . . .	749.900
2. Մասուրներ-մանկապար. 115.000	556.000
3. Դիետ. սննդապարկ. 70.000	302.400

Ահա թվեր, վորոնք պարզապես խոսում են այն մասին, որ մենք լրջորեն ձեռնարկել ենք կանանց կուլտ-կենցաղային ուժեղացման, նրանց արդյունաբերության մեջ ներդրաման ապա և ամրացման աշխատանքներին:

### ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՑՆ ԶԱՓՈՎ ԸՆԴԳՐԿԵԼ ԿԱՆԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Մեր սոցիալիստական շինարարության բաւուն ու աննախընթաց վերելքին զուգընթաց՝ ավելի վճռական, ավելի մարտական և գառնում ժողանականության մեջ կանանց ներդրամական կարգը: Կանանց հարցն առավել ևս ակտուալ բնույթը

ե ստանում քանի գեռ զգացվում և բանումի պակասությունը :

Կար ժամանակ, յերբ մի շարք «գործադուրկներ» բողոքում ելին՝ այս կամ այն հիմնարկի մեջ ամուսիններ, կամ մեկ ընտանիքից յերկու աշխատող լինելու դեսքում, թէ պետք 2-ից մեկին դորձից հեռացնել և այլն : Իսկ այժմ պատկերն այլ է. մեր բանվոր-ծառայողների ընտանիքի աշխատում տունակ անդամների խոչոր մասն աշխատում են զանազան ասպարեզներում : Ներկայումս մեր ժողովնեսության զարգացման տեմպերն են հրամայողականորեն պահանջ դնում, վոր ամբողջ աշխատավորությունն իր ընտանիքի աշխատունակ անդամներին, հատկապես կանանց դնի աշխատանքի և այլպիսով միաժամանակ ուժեղացնի իր բյուջեն :

Այս բոլոր որբեկտիվ հնարավորություններից և կանանց գիտակցական վերաբերմունքից յենելով, մեղ մոտ լայն հեռանկարներ կան՝ կանանց ժողովնեսության մեջ ներդրավելու համար : Լենինը գեռ 1920 թ. գրում եր, վոր՝

«Որենքով հավասարությունը գեռ չի նշանկում հավասարություն կյանքում : Մեզ հարկավոր ե, վոր կի՞ աշխատավորուհին ձեռք բերի հավասարություն վոչ միայն որենքով, այլ և հավատարություն կյանքում, տղամարդ աշխատավորի հետ : Դրա համար հարկավոր վոր ե, վոր աշխատավորուհին ավելի և ավելի շատ մասնակցություն ունենա հաստակական ձեռնարկությունների կառավարման և պետության կառավարման գործում» :

Մինչեւ այժմ բավականին խոչոր աշխատանքներ են կատարված Խորհրդային Միության մեջ Լենինի այս պատգամների կատարման, կանանց իրավակենցաղային դրության բարելավման, նրանց մեր արդյունաբերության և պետության կառավարման գործում և այլ բնագավառներում մասնայտական կերպով ընդգրկելու համար : Այս ուղղությամբ մեր գլխավոր նվաճումներից առաջինն ե, վոր անում և իտ-

նանց տռկոսը մեր դեկավար խորհրդային, պրոֆեսիոնալ, տնտեսական և այլ մարմիններում յերկրորդ՝ այն, վար մեր բարձրագույն դպրոցներում և զանազան կուրսերում չեն-նված չափով անում և կանանց թիվը, և յերրորդ՝ մեր արդյունաբերության մեջ տարեց-տարի խոշոր չափով անում և բանվորությաների ընդգրկումը : Եեթե 1920 թ. հոկտեմբերին Խորհրդային Միության մեջ վարձու աշխատաղ կանանց թիվը կազմում եր 2.271.000, ապա 1931 թ. հունվարին հասնում է 3.594.000-ի, իսկ 1932 թ. հասնելու յե 4.921.000-ի :

Սակայն Լենինի պատգամները լրիվ կենսագործելու և մեր սոցիալիստական շինարարության մեծ ուշանջը բարձրելու տեսակետից՝ մեր նվաճումները գեռես բավարար չեն կարող համարվել : Հնդկամյակի ավարտական տարվա մեր բույն ու աննախընթաց վերելքին զուգընթաց՝ մաքսիմալ չափով պիտի լարենք մեր ուժերը՝ կենսագործելու լճինյան պատգամները, կանանց մասսայորեն զրավելով արագագության մեջ, մաքսիմալ չափով նրանց մասնակցից դարձնելով մեր ամբողջ սոցիալիստական շինարարության դեկավարման ու սոցիալիզմի կառուցման գործին :

Խորհրդային Հայաստանում նույնպես զգալի աշխատանք է կատարված՝ սոցինարարության զեկավարմանը կանանց մասնակցից զարձնելու համար : Եեթե 1932 թ. մեր ժողովնեսության բոլոր ճյուղերում կանանց թիվը հասնում եր 3.200 մի, ապա 1930 թ. արդեն հասնում է 9.790-ի, իսկ 1931 թ. այդ թիվը գրեթե կրկնապատկվել ե :

Եեթե Արհմիություններում կանանց թիվը 1930 թ. կազմում եր 11,614 կամ 14,8 տոկոս, 1931 թիվն այդ հասնում է 15,985 կամ 18,5 տոկոսի :

Մեր ամբողջ ժողովնեսության մեջ (բացի գյուղատրնահեռությունից, յերկաթուղուց և ժողկապեց) յեթե 1930 թ. զրացված բանում 18,3 տոկոս ելին կազմում կանայք, 1931 թիվն—22,1 տոկոս, իսկ 1932 թ. այդ հասնելու յե մինչեւ 30 տոկոսի :

ՅԵԼԵԼՈՎ բանուժի մեծ պահանջից և արդյունաբերության մեջ կանանց ընդգրկելու անհրաժեշտությունից, ՀՍԽՀ Աշխաղողկոմատը 1931 թ. ազրին 4-ի վորոշմամբ հրատարակեց 34 պրոֆեսիաների շանկ, վորոնց մեջ բացառապես պետք ե աշխատեն կանայք:

1931 թ. Անդրաշխաղողկոմատի առաջադրած 5.965 հոդու պլանի գիմաց, մեր հանդիպական պլանով ընդգրկել ենք 8.974 հոդի: Սակայն մենք այդ պիտի համարենք անբավարար և պետք ե այդ ուղղությամբ ավելի յեռանդուն, հրատակ ու սիստեմատիկ աշխատանք կատարենք, նամանավանդ, վոր յերկրորդ հանդիպական պլանը (11.140) մենք չկարող աշխանք կատարել:

Յեթե 1931 թ. ժողովնատեսության մեջ զբաղված վարձու աշխատողների թիվը հասնում եր (առանց յերկաթուղային բանվորների) 81.507-ի, ապա ընթացիկ տարում այդ թիվը հասնելու յե 103.000-ի, այսինքն՝ լրացուցիչ կերպով մեզ պետք ե 21.493 հոդի, վորից արդյունաբերության մեջ՝ 7.409 հոդի, գյուղատնտեսության մեջ՝ 2.200 հոդի և այլն:

Ընթացիկ 1932 թ. մենք նախատեսում ենք մեր ամբողջ ժողովնատեսության մեջ ներդրավել (առանց յերկաթուղու, կազի և գյուղատնտեսության) 9.862 կին, վորից արդյունաբերության մեջ՝ 2.519 հոդի, ժողովուսավորության մեջ՝ 1.389, առողջապահության գծով՝ 1.252, կոսոպերատիվ պետ, առեվտրի և ժողովնողի գծով՝ 2.196, շինարարության 107, վարչական ապարատի գծով՝ 845 և մնացած ճյուղերում՝ 589 հոդի: Բացի այս թվից, Փարզործուաներում պիտի ընդգրկենք 2.115 կին: Մնացած ճյուղերի հետ միասին մենք պետք ե լրացուցիչ 15.000 կին ընդգրկենք մեր ժողովնատեսության մեջ: Այս ստուգիչ թվերը մեր պայմաններում միանգամայն ունալ են և իրակործելի: Մնաւմ ե, վոր մեր բարորշակրգոված մարմինները, կազմակերպությունները յեւանդուն ու սիստեմատիկ աշխատանք կատարեն այս ուղղությամբ:

ՔԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԻՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Առանց կանանց նախատեսության առանց վորակաշխրելու անհնարին կլինի նրանց ներդրավել արտադրության մեջ, առավել ևս անհաջողության կմատնենք նրանց առավելագույն չափով ընդգրկելու գործը: Վոչ միայն մենք պետք է կանանց Փարզործուաների, կարծատե մասսայական կուրամբի միջոցով պատրաստենք, վերապարաստենք, այլ նաև անհրաժեշտ ե, վոր նոր ընդունվող կանանց համար 5-7 որով կուրս-եկամուրսիաներ կազմակերպենք, տվյալ արտադրության մեջ աշխատանքի սրոցեներին ծանոթանալու և առաջարակ ամբողջ ձեւնարկի աշխատանքի պայմանների ու դրույթան մասին գաղափար տալու: Այդպիսով կարելի կրկնի կանխել բանվորուհու աշխատանքի տեխնիկական անվտանգությունը և առհասարակ պարապուրդների ու կարգապահության հարցերը կանոնավորել:

Վորակակալ բանութի պատրաստման հարցում ավելի քան վճռական նշանակություն ունի կանանց ներդրավման աշխատանքը: Գետք և աշխատել հետագա զասընթացներում մաքսիմալ չափով ընդգրկել կանանց: Առաջիկա կուրսերի հավաք ները զլլավորապես պետք ե ուղղված լինեն դեպի կանանց ուղերվաները: Մինչև այժմ մեր համարյա բոլոր կուրսերում կանանց համար նախատեսված թվերը պակաս են մնացել. որինակ՝ Փարզործաշխաղպրոցներում 50 տոկոսի փոխարեն 1931 թ. փետրվարյան հավաքին կանայք ընդգրկվել են 20 տոկոսով, հաջորդ աշնան հավաքին՝ 20,1 տոկոս, առ 1-ի զեկանեմբերի 1931 թ. սովորում են Փարզործուաներում 3.534 հոդի, վորից 672 կին կամ 19 տոկոս այն ինչ մեզ պետք էր մինչև 50 տոկոս: Վատ դրության մեջ ե կանանց ներդրավմամբ շինարանվորներ պատրաստելու ինդրում: Անշուշտայի յերեվութը հետևանք և գլխավորապես կանանց ներդրավմամբ թերաղնահատելու ուղղորդուանիստական պրակտիկայի և կանանց մեջ կտարրվող աշխատանքի թուլության:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ՆԵՐԴՐԱՎԱՐԱՆԸ

Առօրհղային Հայաստանում բավականին խոշոր թիվ են կազմում աղքային փոքրամասնությունների աշխատավորական տարրերը՝ հատկապես թուրքերն ու յեղիները, վորոնց պետք և հավաքարկել, վորակավորել և գրավել արդյունաբերության մեջ։ 10-րդ կուս համագումարի՝ աղքային հարցի վերաբերյալ ընդունած վորոշման մեջ ասված ե՝

«Կազմակերպել և զարգացնել թե հանրակրթական և թե սրբագրության տեխնիկական ընույթի դասընթացների լայն ցանց, մայրենի լեզվով (առաջին հերթին կերպելով լեզվի, բաշկրտերի, թուրքմենների, ուղրեկների, տաջիկների, թաթարների, դաղստանցիների համար և այլն) վորակյալ բանվորների տեղական կազմերի պատրաստումն արագացնելու համար»։

Յեթե մեր թուրք ու յեղիդի աշխատավորության մեջ դրամի աշխատանք է կատարված հանրակրթական և վորոշչափով պրոֆեսիոնալ-տեխնիկական գծով, ապա բանութիւնատրաստման մասսայական կարճատես դասընթացներ կազմակերպելու և նրանց արդյունաբերության մեջ ընդգրկելու ուղղությամբ շատ քիչ գործ է կատարվել։

Միութենական կենտրոնական գործությունների մասնակիության մեջ Աշխատողկոմային և անտեսական մարմիններին՝ «ԽՍՀՄ բանվորական ուժի պատրաստման ողտագործման ու բաշխման ընդհանուր պլանում նախատեսելու աղդ։ կաղըրերի պարտադիր ներգրամիումն արդյունաբերության մեջ և նրանցից վորակավոր բանվորների պատրաստումը»։

Մեր հետաքա աշխատանքներն այս բնագավառում պետք է ընթանան կուտակցության և կառավարության այդ դիրէկտիվների անշեղ կենսագործման ուղիով։

ՊԱՅՔԱՐԵԼ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԴՐԱՎԱՐԱՆ ԽՈՉԲՆԴՈՑՆԵՐԻ  
ԴԵՄ

Դեռ կան մարդիկ, յերբեմն անտեսավարներ, վորոնք կանանց ընդդրկման հարցում վարդում են այսպէս, ինչպես մի ժամանակ առածն եր ասում՝ «Հայր թոշուն չի, կինն եւ մարդ չի» կամ կնոջ «զալմալալը» տանել չի լինի և այն։ Կասկածից գուրս ե, վոր պիսիք և յուրաքանչյուր քանվորանվորուի կատաղի պայքար միի նման այլանդակ ու խայտակ տրամադրությունների դեմ։

Կանանց ներգրավման հարցի համար անհրաժեշտ բոլոր որյեկտիվ պայմանները մեղ մոտ կան. միայն հարկավոր և այս վճռական նշանակություն ունեցող հարցի չուրջը ստեղծել լայն հասրակայնության և այդ ուղղությամբ յեռանդուն աշխատանք կատարել։ Բայց վեհիկյան անողոք հարկած տալ գեռես գոյություն ունեցող կոնսերվատիզմին և բոլոր տեսակի թերահավատ ու ոպորտունիստական տարրերին, վորոնք արգելակում են այս կարեվորագույն գործը։ Կանանց մեջ կատարվող աշխատանքը, նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու գործը վոչ միայն թերաքնահատելու տենդենցները գեռես կան, այլև այդպիսի տենդենցներ արտահայտողները յեղակի չեն։ Նրանց կարծիքով կինը չի կարող տղամարդու գործը կատարել։

Մակայն իրական փաստերը վաղուց են ջախջախել ու ջախջախում են այդ ոպորտունիստական նլոցները։ Վերջին տարիների փորձը ցայտուն կերպով ցույց տվեց, վոր կինը աղամարդուց հետ չի մնում՝ պարտաճանաչ կերպով աշխատելու և ավելի դիսցիպլինար լինելու տեսակետից։ Կինը նույնպես դառնում է մնայուն աշխատող։ Նա հետ չի մնում նույնպես պետական, հասարակական գույքը ինամքով վերաբերյալու գործում։

Վորպեսզի արտադրության մեջ կանանց ընդդրկելու խնդիրն ավելի հաջող ընթանա, մենք պետք և կանանց

պատրաստման, վերապատրաստման խնդիրը մեր ուշադրության կենտրոնը դարձնենք և ապացուցենք այն իրական փաստը, վոր մեր արդյունաբերության շատ ճյուղերում ավելի քիչ տույժեր ե ստացել բանվորուհին՝ պարապուրդներ և աշխատանքի դիսցիպլինայի խախտման զանազան գեղեցրի համար, քան բանվորը, վոր բանվորուհիները յերբեմն ավելի շատ են ընդդրկված յեղել հարվածայնության մեջ, քան բանվորները, վոր շատ գեղեցրում մեր դըպրոցներում և կուրսերում կանայք ավելի լավ սովորողների ունուն ունեն, քան աղամարդիկ:

ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՐՁ  
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ Ե ՊԱՀԱՋՎՈՒՄ

Մեր կուս և կաթեմ բջիջները պետք ե մեծ ուշադրություն նվիրեն այդ աշխատանքներին: Այս ուղղությամբ հսկայական գեր ունեն կատարելու մեր պրոֆեսուլիվները, վորոնք պետք ե անմիջապես զրադվեն այդ աշխատանքների պլանների քննության, հանդիպական պլաններ առաջարկելու և իրենց հիմնարկ-ձեռնարկներում հավաքադրություն ու պատրաստումը կազմակերպելու հարցերով: Ավելի քան իսուոր գեր ունեն կանանց կենցաղը բարելավող կազմակերպություններն ու պատգամովարական ժողովները, վորոնք դեռևս շատ դանդաղ են շարժվում, շատ դիպելում զեկուցումները լսելուց դեմք չեն անցնում: Մինչդեռ պահանջվում է կոնկրետ և գործնական աջակցություն ցույց տալ այդ աշխատանքներին: Չպետք ե մոռանալ մեր մեծ ուսուցչի խոսքերը, թե՝ «կնոջ աղատադրման գործը իրենց՝ կանանց գործն ե», վոր «Ամեն մի իսկարարուհի պիտի սովորի յերկիր կառավարել»: Ենինի այս պատգամները բավականին չափով մեկնում երականացել են, սակայն այդ պիտի համարել աննշան, քանի վոր մենք յերկրորդ հնագույնակին ասպատակարգային հասարակություն պետք ե ստեղծենք, քանի վոր մենք պետք ե այդ հնդամյակում

ՄԵՐ ԿԵՆՍԱԳՈՐԾԵՆՔ ԼԵՆԻՆԻ պատգամները: Անշուշտ կանանց կուլտուրական զարգացման, նրանց արտադրության մեջ ներդրավելու գործը բոլորի սեփականությունն ե, սակայն կանանց կազմակերպություններից պետք ե ավելի պահանջել: Մեր կին ինտելիգենցիան՝ ուսուցչուիններն և ամեն տեսակի գիտական աշխատավորուինները հսկայական դեր ունեն կատարելու այս հարցերում:

Կանանց ներդրավալման հարցում անբավարար դրության մեջ ե և մեր մի շարք բրձանային մարմինների աշխատանքները:

1007  
3154

Այս չափավորմաց լուրջ ասպարիզում ամենից շատ շահագրգոված են, և պարտավոր են հարկ յեղած աշխատանքները կատարել մեր տնտեսական մարմինները: Նրանի պետք ե իերաց հալաբագրման ապարատում հատուկ կին հալաբագրողներ պահեն և մասխմալ յեռանդ գործադրեն, վոր այդ ուղղությամբ յեղած պլանները վոչ միայն կատարվեն, այլ և գերակատարվեն, միաժամանակ կազմակերպելով ընդգրկված կանանց վորակավորման գործը:

ԿՈՂՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՆՔՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՔ  
ԼԻՒՎ, ԶՈԴԱԴՐՈՒՄՎԵԼՈՎ՝ ԱՐՏԱԴԱՑՆԵՐ. ՔԻԶ ԵՆ  
ՏԱԼԻՒ

Կանանց մեր ժողովնատեսության մեջ առաջելագույն շափով լսնդրկելու գործում հսկայական անելիքներ ունեն մեր կոլտնտեսուհիները: Անցյալ տարվա փորձը ցույց տվելով, վոր մեր կոլտնտեսուհիները, գեղջկուհիներն արդեն խոչըն չափով թողել են իրենց հին սովորություններն ու մեծ ձգուում ունեն զետի կոլտնտեսության դաշտային և բոլոր տեսակի աշխատանքները: Անիրամելու և գործը կազմակերպել այնպես, վոր խթանվի այդ բեկումը, ավելի խորանա: Պետք ե ե՛լ ավելի լավ դրույթյան հասցնել կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման գործը, և ձգուել վոչ միայն կանանց գյուղատնտեսական աշխատանքներում գլխովի

քնդգրկելու, այլ և կազմակերպված ձեվով կամացից արագնացներ տրամադրելու հաղաքի առց. շինարարությանը՝ մասնավորապես տեսակի ինի:

ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅՆՈՒՅՆ ԿԵՆՑԱԴԻ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր սոցիալիստական տնտեսության բուռն ու աննախընթաց վերելքը մեղնից պահանջում է ե'լ ավելի լուրջ ուշադրություն դարձնել կանանց կուլտ-կենցաղային կարիքների բարձարացման վրա:

Կանանց ներդրավման գործում ամենալուրջ խոչընդուռը՝ հենց այդ հարցն է: Մեր բոլոր համապատասխան մարդիները պետք է իրենց ջանքերը լարեն և միջոցների դիմեն այդ ուղղությամբ յեղած դժվարությունները հաղթահրելու համար:

Հրամայականն ու հիմնականը կանանց կենցաղային պայմանները կանոնավորելու հարցն է, բնակարանների, ժուրաների, մանկապարտեզների, ինչպես նաև սննդի և նըման այլ աշխատանքների կազմակերպման հարցն է, վոր մեղնից պահանջում է լրիվ և ուսցիոնալ ողտագործում յեղած բոլոր հնարավորությունների՝ այդ գործն ավելի բարձր աստիճանի հասցնելու համար:

Կասկածից գուրս է, վոր մեր բոլոր շահագրդույթած մարմինները և մեր ամբողջ խորհրդային հասարակայնությունը, կիս մոտենալով տվյալ աշխատանքներին, կյանքի կոչելով իրենց ապարատի բոլոր ողակները՝ կանանց ներգրավման հարցի հաջող լուծման կապահցությամբ՝ կապահանձնեն կուլտ-կենցաղային շինարարության ձեռնարկումները և նրա հետ միասին նախատեսված պլանների գերակառությունը՝ հանդիպական պլաններով:

ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅՆՈՒՅՆ ԿԵՆՑԱԴԻ  
ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ

Մեր արդյունաբերության ինդուստրացումը, նրա ահենքիկական առաջընթացը, ինչպես նաև գյուղատնտեսության մեքենայացումն ու կոլեկտիվացումը՝ բանուժի վրոշ խնայողություն են առաջ բերում, սակայն այդ բոլորը դիմաք: Քաղաքի արդյունաբերության բուռն աճումը, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, խորհանութեական շինարարությունը, տեղական գործարանային ու արհեստանոցային կյանքի աճումը կկլանեն բանուժի այդ ավելցուկին ամբողջությամբ: Առաջիկա մի քանի տարիներում ձեռքի աշխատանքը դեռ խոչըր տեղ է գրավելու: Ինքնին պարզ է, վրոր գյուղը միայն աղամարդ արտադրանայնելով, տղամարդկանց բանուժի ավելցուկի ուղղերվներով՝ արդյունաբերությանը բավարարել չի կարող: Մեր ամբողջ սոցիալիստական շինարարությունը բանուժով ապահովելու հիմնական աշխատանքը մեղքը, մոտակա տարիներում, հանդիսանալու յեն կանաչը, թե քաղաքում և թե հատկապես գյուղում: Այս տեսանկյունով պետք է կազմակերպել բանուժի հավաքագրման և պարտաստման գործը, զենքս գործադրկության լիկվիդացիայի 2-րդ տարին ենք թեակոխում, անտեսավարեներից վաճանք 5—10 բանվորի իրենց կարիքը հոգալու համար դիմապառույթի մեջ են ընկնում: Եեվ իրոք, այդ ուղղությամբ վորոշ գժվարություններ կան, վորոնց հաղթահրելու ձևերն ու մեթոդները զեռ մեղնից շատերը լավ չեն յուրացրել և այդ նշանակում է, վոր ընկ: ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅՆՈՒՅՆ մարտական 6 ցուցմունքները լավ չենք կենսագործում:

Մեր տեմպերը մեղնից պահանջում են հիմնական բարեփոխում առաջ բերել մեր կենցաղի, հատկապես կանանց կենցաղի մեջ:

Ժողովնետեսության մեջ կանանց մասսայիրեն գրավելու և կանանց վերջնականապես բութութեական մասնալորսեափականատիրական սովորություններից, կենցաղի այլանդակ

մնացորդներից աղատադրելու հիմնական և վճռական նախադրյալն է կանանց ներգրավումը կոլեկտիվ կյանքի, հանրային սպասարկման մեջ։ Այս ճանապարհով և, վոր մենք վերջնականապես կկարողանանք կնոջն աղատադրել խոհանոցից, նրան այլելի լայն չափով ընդգրկելով մեր սոցիալիստական շնչարարության մեջ։ Այս կերպ միայն կինն իրոք տղամարդուն հավասար ստեղծագործ ուժ կդառնա։ Կոլեկտիվ կյանք ստեղծելու դեպքում առաջ կդա հսկայական միջոցների, մթերքների ու բանուժի խնայողություն, վորը խոշոր եֆֆեկտ կունենա բանվոր-ծառայողների, անտեսական կուլտուրական ու կենցաղային բարեկեցության համար։

Մեր Սրհմէություններն ու բնակարանային կոռուպերացիան պետք է մտածեն այդ ուղղությամբ և ձեռնամուխ լինեն անհրաժեշտ աշխատանքի։ Նույնիսկ ամիսների ընթացքում կարելի յե այդ ուղղությամբ շոշափելի արդյունքների հասնել։ Բնակչին կոռուպի գծով ներկայումս կառուցված և կոռուցվելիք շնչքելը կարելի յե և պետք է հարմարեցնել կոլեկտիվ կյանքին։ Միթե Յերևանում «Ծնուերնացիոնալ» կամ «Իլիչ» շնչքերում չի կարելի նման բանվորական կոլեկտիվների հանրային սպասարկում կազմակերպել։ Այս ուղղությամբ պետք է լրջորեն մտածել։ Ժամանակն ե, վոր կանանց արդյունաբերության մեջ ներդրավելու դործով շահագրդընդունած մեր բոլոր կազմակերպություններն իրենց ուշադրության առանցքը դարձնեն կտնանց կենցաղի վճռական վերակառուցման գործն ե՛լ ավելի բարելավելու խնդիրը։ Այս ուղղությամբ մինչեւ այժմս մեր կատարած ձեռնարկումները պետք է համարել այլելի նվազագույն և դիմել ավելի վճռական՝ ավելի դորձնական քայլերի։

ԹՈՂ ԽՈՀԱՆՈՑԸ, ՊՐԻՄՈՒՍԸ, ՀԻՆ ՏԱՇՏԱԿԸ ՅԵԼ ՊԱՏՐԱՍՎԱԿԻ ԴԻՄԵԼ ԴԱԶԳԹԱՀԸ

Հնդամյակի աղատական այս նշանակալից տարում մեր կուսակցությունն ու կառավարությունը և մեր վողջ բան-

վոր գասակրպը բոլորի վրա վլւել են մարտական խոչոր պարտականություններ։ Մեր սոցիալիստական շնչարարության բոլոր բնագավառներում մեր տեմպերն այս տարի պիտի կրկնապատկել, և դրա համար ամենից առաջ պետք է վոր վոչ մի կին անգրագիտ չմնա, այլ սովորի, իրեն վորակյալ ուժ պատրաստի։ Պետք է վոչ մի աշխատունակ կին տանի իգորոյ չմնա, այլ իր տնաւունու հետ ձեռք-ձեռքի տված՝ դազգյանի մնա կանգնի։ Այդպիսով սոցիալիզմի ակտիվ կառուցղղ դառնա, ուժեղացնի իր տնաւեսականը, իր բյուջեն։ Դեռ վորոշ ժամանակայ տանի աշխատող տնտեսութիններն ել պետք է իրենց ամսափնեներից պահանջենի, վոր նրանի լավ պայքարեն աշխատանքի արտադրողականության, ինքնարժենի իշեցման, պրոգրամների պակասեցման համար, վոր նրանի համախակի շարաբ-որյակների կազմակերպին արդյունաբերության մեջ աշխատող իրենց ամսափնեների, բույրերի և յելբայրների հետ ու զարկ տան սոցիալիզմի կառուցղան մեծ գործին։

Աշխատանքի նման ձևերն ու մեթոդները նոր զրային Միության շատ վայրերում կիրառվում են, անդամ տնտեսութիններն իրենք իրենց աշխատող ամսափների հետ սոցքրցման պայքանագրեր են կնքում, կին-պատգամավորական ժողովների միջոցով հաշիվ տեսնում։

Հայ, քուրք, յեզդի և այլ ազգի կանայք, պատրաստ յեղեք դազգյանի մոտ կանգնելու։

Տվե՛ք Խորհրդային Հայաստանի ժողովնեսությանը 15.000 նոր կին մարտիկներ, սոցիալիզմ կառուցղներ։

Զմոռամաք, վոր պատերազմի վտանգի դեպքում մեր սոցիալիստական յերկրի պաշտպանության գործը մեծ չափով սպահաված կիրենք, յերեւ առավելագույն չափով ընդգրկված լինենք արդյունաբերության մեջ՝ իրեն փոխարինողներ հակառ մեկնող ռազմիկների։

Կանանց կազմակերպությունների, վերցրե՛ք տեքստի արդյունաբերության շեֆությունը, ուր աշխատում են 3.400

բանվորուհիներ, ուր մոտագալ 1—2 տարում՝ կրկնապատկվելու յև այդ քիվը:

Անշուշտ դասակարգային թշնամիները և նրանց ազենաներն ու բոլոր տեսակի ոսկորտունիստները մեզ խանդարելու յեն նաև կանանց ընդգրգման հարցում: Յեղի՛ք զգոն՝ դասակարգային թշնամու բոլոր տեսակի հականեղափախական տրամադրություններին չախչախիչ հարված հասցնելու գործում:

Այդ բոլորը հաղթահարելու համար պետք է ե՛լ ավելի լավ յուրացնել և կենսողործել ընկ. ՍՏԱԼԻՆԻ պատմական 6 ցուցումները:

Կանանց ներգրավելու հետ կապված հարցերը, ինչն որոնք կուլտուր-կենցաղային կարիքները բավարարող, թէ այլ հարցեր, կլուծվեն այնպես, ինչպես հաղթահարում ու լուծում ենք մեր պայքարի բոլոր ֆրոնտներում առաջացող գժվարությունները: Այս խնդրում նույնպես Խորհրդավյին Հայաստանի բանվորությունը ԽՍՀՄ բանվորության հետ մէասին լենինյան սրատգամները լրիվ կենացքարձելով՝ իրաք կառեղծի իրավահավաքը, տուղթագործող ու կառուցալ միասնական բանակի: Յեվ մարդկության աշխատավորության կիս մարդ կազմող կինը 2-րդ հմգամյակում տղամարդու հետ հավաքարապես ապադասակարգային հասարակության անբաժան ու միասնական ջոկատը կինի իրոք:


Բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ, գեղջկուհիներ ու տնտեսուհիներ, միշտ իիշեցե՛ք մեծ ուսուցիչ Լենինի պատգամները, մտե՛ք կոմկուսակցության և պրոֆիլության շարքերը, արագացրե՛ք սոցիալիզմի վերջնական կառուցման իրարժուումը:

Կեցք կանանց միջազգային պատմագրումը:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կանանց հեղափոխական տոնը	3
2. Կինը կապիտալիստական յեկաներում	4
3. Կինը հորիուրդների յեկաներում	6
4. Առավելագույն չափով ընդգրկել կանանց արդյունաբերության մեջ	9
5. Բանվորուհիների պատրաստման գործին ե՛լ ավելի ուշադրություն	13
6. Ուշադրություն կին ազգային փոքրամասնությունների ներգրավմանը	14
7. Պայքարել կանանց ներգրավման խոչընդունների դեմ	15
8. Բոլոր կազմակերպությունների լուրջ ուշադրությունն է պահանջվում	16
9. Կոլտնտեսությունների աշխատանքներում կանանց լրիվ չոգուագործվելով՝ արտագնացներ ֆիշ են տալին	17
10. Ուժեղացնել կուլտ-կենցագային շինարարությունը	18
11. Ուշադրություն աշխատավորուելու կենցաղի վերակառուցմանը	19
12. Թո՛ղ հողահոնցը, պրիմուսը և կին տաշտակը և պատրաստվի՛ր դիմել դեպի դազգյանը	20



44-618 8 ЧИЧІГІ  
(7, 4.)



Н. ХАЧИКОГЛЯН  
ОТ КУХНИ К СТАНКУ

Государственное издательство  
Армянской ССР  
Ереван—1980

«Ազգային գրադարան



NL0236188

55.952